ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

«03» 04 2013թ.

N 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Ղահրամանյան*

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի կողմից մարտ ամսվա ընթացքում արձակած կարգադրությունները: Ընդունած որոշումներ չկան:

Առդիր՝ 3 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

3073-13
03 04 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«1» մարտի 2013 թվականի N 1

## ԳՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, 4-րդ մասի 2-րդ կետով, Այգեկի գյուղապետարանի գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար՝ *կարգադրում եմ.*

1. Սահմանել գնումների համակարգող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (գլխավոր հաշվապահ) Սուսաննա Թորոսյանին վերապահելով Այգեկի գյուղապետարանի կարիքների համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերելու պարտականությունների կատարումը:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին (Ս. Թորոսյան)՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում իրականացնել գնումների համակարգողին վերապահված գործառույթները և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել համայնքի ղեկավարին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2013 թվականի մարտի 1
գ. Այգեկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«1» մարտի 2013 թվականի N 2

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշման հավելված N1-ի 13-րդ կետի «գ» ենթակետը, 35-րդ կետի 1-ին ենթակետով, Այգեկի գյուղապետարանի գնումների գործընթացի համար համապատասխան գործառույթներ իրականացնելու նպատակով՝ *կարգադրում եմ.*

1. Կազմավորել գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2013 թվականի մարտի 1

գ. Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկ գյուղական
համայնքի ղեկավարի
2013 թվականի մարտի «1»-ի N 2 կարգադրության

# ԿԱԶՄ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ - | Աբրահամյան Մայիս - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ |
| Հանձնաժողովի քարտուղար - | Թորոսյան Սուսաննա - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի առաջատար մասնագետ |
| Հանձնաժողովի անդամներ - | Սարգսյան Գայանե - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար |
| | Եղիազարյան Քնարիկ - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ |
| | Հովհաննիսյան Գոհար - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ |